ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Պետական պահպանության ծառայությունը, որը գտնվում է ք. Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 հասցում, ստորև ներկայացնում է ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 24.12.2020թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 գնման Պայմանագրում(այսուհետև՝ Պայմանագիր) 2021թ.-ի մարտի 25-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն)վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Փոփոխության պատճառ է հանդիսացել պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետում մատակարարի կողմից 1-ին և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման անհնարինությունը՝ պայմանավորված ապրանքի հումքի ներկրման ժամանակ առաջացած խոչընդոտներով:

**Փոփոխության նկարագրություն և հիմավորում:** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, 24.12.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 պայմանագրի 8.6 կետը և 22.03.2021 թվականին «Մանանկ» ՍՊԸ-ից ստացված գրությունը(կցվում է), կողմերը համաձայնության եկան պայմանագրի 1-ին և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանել 30.04.2021թ:

Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Կարեն Գասպարյանին:

Հեռախոս՝ 010 – 53-23-58

Էլ. Փոստ՝ karen-gasparyan89@mail.ru

Պատվիրատու՝ Պետական պահպանության ծառայություն

# << Մ Ա Ն Ա Ն Կ >>Մ Պ Ը

Հասցե՝ ՀՀ,ք.Երևան,Ավան Առինջ 2 միկր./2/10/ 39
Էլ. փոստ manank2@mail.ru
Հեռ. (010) 62-75-85

**ՊՊԾ պետ, գնդապետ՝ Ս.Հովհաննիսյանին**

**N Մ-017**
**19.03.2021թ.**

**Հարգարժան պարոն Հովհաննիսյան,**

<<Մանանկ>> ՍՊԸ 24.12.2020թ. N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 պայմանագրի համաձայն պետք է մատակարարեր հանդերձանք թվով 7 չափաբաժին, որից 5 չափաբաժինը արդեն պատրաստ է և ժամանակին կմատակարարվի, իսկ 1 (Համազգեստ) և 6 (Համազգեստ) չափաբաժինների գործվածքները ներկրվում են ավտոտրանսպորտով: Այն ս/թ փետրվարի 25-ին բարձվել է և մինչև օրս ճանապարհին է, այսօրվա դրությամբ գտնվում է ՌԴ Լարսի անցակետում և անհայտ է, թե երբ կանցնի սահմանը, քանի որ այն մասամբ փակ է լինում և մեծ հերթ է առաջացել:

Ելնելով ստեղծված իրավիճակից խնդրում ենք պայմանագրի 8.6 կետի համաձայն վերը նշված այդ երկու չափավաժինների մատակարարումը երկարաձգել 30 օրացուցային օրով:

Կից ներկայացնում ենք վերը նշված փաստերը հավաստող փաստաթղթերը <<2 >> թերթից:

**Կանխավ շնորհակալ ենք:**

<<Մանանկ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ.Մելիք-Սարգսյան

Պետական պահպանության ծառայություն
Մուտք № 262
«22» 03 2021 թ
ք. Երևան

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան «25» 03 2021թ.

Պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ <<Գնորդ>>, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետ Ս.Հովհաննիսյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Մանանկ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ <<Վաճառող>>, ի դեմս տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 24.12.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 պայմանագրի 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, 24.12.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 պայմանագրի 8.6 կետը և 22.03.2021 թվականին «Մանանկ» ՍՊԸ-ից ստացված գրությունը, կողմերը համաձայնության եկան պայմանագրի 1-ին և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանել 30.04.2021թ:

1.2 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.04.2021 թվականը ներառյալ:

## 2.Մատակարարման պայմանագիրը

2.1 Վաճառողը պարտավորվում է ապրանքը մատակարարել 24.12.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

2.1.1 Կողմերը եկան համաձայնության 24.12.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 պայմանագրի հավելված 1-ը և հավելված 2-ը հաստատել ներքոհիշյալ խմբագրությամբ՝

## 3. Ապրանքի գինը, մատակարարման պայմանները

3.1 Սույն համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարվելիք ապրանքի գինը ներկայացված է պայմանագրի Հավելված 1-ում: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 17623000(տասնյոթ միլիոն վեց հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3.2 Պայմանագրի գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև վաճառողի կողմից իրականացվող ծախսերը:

## 4. Այլ պայմաններ

4.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 24.12.2020 թվականին կնքված N ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-1/2021-2-1 պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Սույն պայմանագրում չնշված՝ կողմերի գնման պայմաններով նախատեսված իրավունքները և պարտականությունները, ապրանքի հանձնման և ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

**ԳՆՈՐԴ**
**Պետական պահպանության ծառայություն**
**ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20**
**ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի**
**գործառնական վարչություն**
**Հ/հ 900011004497**
**ՀՎՀՀ 00006796**

**Պետ՝** **Ս. Հովհաննիսյան**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ**
**ՀՀ, Երևան, Առինջ 2 մկշր/2/10/39**
**Կոնվերսբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 19300920182600**
**ՀՎՀՀ 01016995**

**Տնօրեն** **Վ. Մելիք-Սարգսյան**

*Հավելված N 1*
*«      »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 35811170/505 | Համազգեստ | Մանանկ ՍՊԸ | **Ձմեռային կոստյում կոմուֆլյաժ գործվածքից /լրակազմ/:** Պետք է արտադրվի 35 բամբակ, 65 պոլիէսթեր բաղադրությամբ լեռնաանտառային թվային գունավորմամբ ռիբստոպ տեսակի գործվածքից 245 գ/մ2 մակերեսային խտությամբ, /21× 21/, /108 × 58/, 2.5 սմ² գծային խտությամբ, 150 սմ լայնությամբ ռեակտիվ ներկված և ռեակտիվ թվային տպագրված ջրայուղաանդրադարձնող ներծծմամբ: Ներկի կայունությունը ըստ հետևյալ ցուցանիշների՝ | լրակազմ | 25000 | 10000000 | 400 | ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 400 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բայց ոչ ուշ քան 30.04.2021թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | լվացում 4-5 աստիճան<br>քրտինք 4-5 աստիճան<br>արև 5 աստիճան<br>չոր շփում 4-5 աստիճան<br>թաց շփում 3-4 աստիճան<br><br>Ձմեռային կոստյումը բաղկացած է բաճկոնից, ժիլետից և տաբատից: Ժիլետի երեսացուն՝ լեռնաանտառային թվային գունավորմամբ ռիբստոպ տեսակի 245 գ/մ2 մակերեսային խտությամբ, 35 բամբակ, 65 պոլիէսթեր բաղադրությամբ գործվածքից: Ժիլետի ներդիրը մշակվում է մգդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ արհեստական գործվածքից: Ժիլետը կոճկվում է կենտրոնական շղթայով, մինչև օձիքի վերջը, որի վրայից ներքևից վերև մինչև օձիքի ներքին հատվածը մշակված է երկկողմանի սեպաձև 7-7□5 սմ լայնության կափույր, որը վերևում, | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մեջտեղում և ստորին մասում կոճկվում է կպչուն ժապավեններով: Ժիլետի օձիքի բարձրությունը մեջտեղում 8-9 սմ է, եզրերում՝ 10-11 սմ լայնությամբ: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝ կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում, իսկ երկուսը՝ կողային մասերում: Կափույրների և գրպանների ներքին եզրերը թեք մշակված: Կրծքամասի գրպանների լայնությունը 15 սմ, երկարությունը 17 սմ՝ կափույրի հետ միասին, կափույրի լայնությունը 6 սմ: Գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 6 սմ հեռավորության վրա: Կրծքամասի ձախ գրպանի կենտրոնում կարված է 11սմ լայնությամբ և 8□5 սմ երկարությամբ վրադիր կափույրով գրպանիկ: Առաջամասի կողային վրադիր գրպանների լայնությունը 18□5 սմ, երկարությունը 21 սմ՝ կափույրի հետ միասին, | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կափույրի լայնությունը 7 սմ: Կողային գրպանները տեղադրված են ժիլետի ներքին եզրից 2□5 սմ բարձրության վրա, գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 6 սմ հեռավորության վրա: Առաջամասի կողային վրադիր գրպանները՝ կողքից և վերևից մուտքերով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0□7 սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0□1 սմ կարի լայնությամբ: Առաջամասի բոլոր գրպանների կափույրները եզրերից կոճկվում են պաշտպանական գույնի կպչուն ժապավենով: Ժիլետի աստառի ձախ կրծքամասում մշակված է ծոցագրպան, որը կոճկվում է կպչուն ժապավենով: Ժիլետի ուսագոտիների եզրերը ծալված և վրակարված են, ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 1 սմ: Գոտկատեղում մշակված են 2□5 սմ լայնության ներկարված էլաստիկ ժապավեններ՝ իրանի չափերի | | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կարգավորման համար: Թիկունքամասի բարձրությունը մշակված է 4□5 սմ - ով ավելին, քան առաջամասի բարձրությունը, հաշվարկված ուսակարերից: Բաճկոնը կոճկվում է երկգլխանի շղթայով (8 համարի) և 4 հատ 28 մմ տրամագծով պլաստմասե հրակայուն կոճակ օղակներով: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Բաճկոնի ներքևի եզրերի ծալման լայնությունը 2 սմ է, իսկ թևքերինը՝ 0□5 սմ: Բաճկոնի դրսի կողմից, գոտկատեղի ուղղությամբ մշակվում է 2-3 սմ լայնությամբ գոտի /եզրաշերտ/ մեջը գոտկանման պարան՝ իրանի հարմարեցման չափսերի կարգավորման համար: Բաճկոնի լանջափեշի ձախ կողմում մշակված է ծոցագրպան ատրճանակի համար: Լանջափեշի աջ կողմում մշակված է ծոցագրպան, որը կոճկվում է մեկ օղակով և մեկ կոճակով: Ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ 28 մմ | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տրամագծով պլաստմասե հիմնական կոճակ օղակով: Բաճկոնի առաջամասում մշակված են 4 վրադիր գրպաններ կափույրներով, որոնցից երկուսը՝ կրծքամասում, երկուսը՝ կողային հատվածում: Կրծքամասի վրադիր գրպանների կափույրների երկարությունը 15 սմ է, կափույրի կենտրոնական ամենաերկար հատվածը 8⍰5 սմ է, իսկ կողային հատվածները 5⍰5 սմ: Կրծքամասի գրպանների երկարությունը 18⍰5 սմ է, լայնությունը գրպանի ներքևի հատվածում 12⍰5 սմ, իսկ վերևի հատվածում՝ 15 սմ: Կրծքամասի գրպանները կոճկվում են 28 մմ տրամագծով պլաստմասե հոլակային մեկական կոճակով, որոնք տեղադրված են կափույրի կենտրոնական հատվածի ներքևի մասում: Կրծքամասի գրպանները տեղադրված են կենտրոնական ուղղահայաց կարից 11 սմ հեռավորության, իսկ բաճկոնի ներքևի եզրից 30 սմ բարձրության վրա: Բաճկոնի կողային գրպանները մշակված են բաճկոնի ներքևի եզրից 5⍰5 սմ բարձրության, | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | իսկ կենտրոնական ուղղահայաց կարից 11 սմ հեռավորության վրա: Կողային գրպանների երկարությունը 19□5 սմ է, լայնությունը գրպանի ներքևի հատվածում 18 սմ, իսկ վերևի հատվածում՝ 19□5 սմ: Կողային գրպանները կոճկվում են 28 մմ տրամագծով պլաստմասե հրակայուն մեկական կոճակով, որոնք տեղադրված են կափույրի կենտրոնական հատվածի ներքևի մասում: Կողային գրպանների կափույրների երկարությունը 19□5 սմ է, լայնությունը կենտրոնական հատվածում 10□5 սմ, իսկ կողային հատվածներում՝ 7□5 սմ: Բաճկոնի ուսերի կարի վրա մշակված է գլխանոց, որի վերևի ամենաերկար հատվածը 30 սմ է: Գլխանոցի երեսացուն մշակվում է լեռնաանտառային թվային գունավորմամբ ռիպստոպ տեսակի 245 գ/մ2 մակերեսային խտությամբ, 35 բամբակ, 65 պոլիէսթեր բաղադրությամբ գործվածքից: Գլխանոցի | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | և ուսերի միացման կարից մինչև կենտրոնական ուղղահայաց կարը 15 սմ է: Գլխանոցի կենտրոնում մշակված է 5 սմ լայնությամբ զարդակար, որի վրա ամրացված է կպչուն ժապավենով չափերի կարգավորիչ: Գլխանոցի եզրային հատվածում մշակվում է 2սմ լայնությամբ գոտի /եզրաշերտ/ մեջը գոտկանման պարան՝ գլխանոցի չափերի կարգավորման համար: Բաճկոնի թևքերի ներքևի մասում մշակված են 8 սմ երկարության լեզվակներ կտրված անկյուններով, որոնք բազկակալում կոճկվում են կպչուն ժապավենով: Բաճկոնի ձախ թևքի վրա՝ ուսակարից 9 սմ հեռավորության վրա կարված է կպչուն ժապավենի փափուկ հատվածը 11 սմ երկարությամբ և 10 սմ լայնությամբ: Բաճկոնի և գլխանոցի աստառացուն մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ 100 պոլիէսթեր արհեստական կտորից: Տաբատը մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով: | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով է: Գոտու վրա տեղադրված են 5 կամրջակեր և գոտու չափը կարգավորող 2 ախլակներ, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 հատ 15 մմ տրամագծով կոճակով: Առաջամասում մշակված են ծնկակալներ: Տաբատը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, /գուֆիկով/ 5 հատ 15 մմ տրամագծով օղակ կոճակներով, որից երկուսը գոտու վրա են: Տաբատը ներքնամասում կապվում է կապիչներով: Տաբատի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ երկու լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ մեկ լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: | | | | | | | |
| 4 | 18331200/508 | Վերնաշապիկներ | Մանանկ ՍՊԸ | **Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ գույնի ԳՕՍՏ 19867-93:** Արտիկուլ-82039 կամ համանման կտորից, 1մ2 | հատ | 4800 | 336000 | 70 | Ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղ | 70 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | քաշը 180գր., բաղադրությունը՝ 33% վիսկոզա, 67% պոլիէսթեր: Տղամարդու վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից կտորի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտադրվում են 38/2-46/6 չափս-հասակների: Արտաքին | | | | | ի 20 | | Կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բայց ոչ ուշ քան 31.03.2021թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն : | | | | | | | |
| 5 | 18331200/507 | Վերնաշապիկներ | Մանանկ ՍՊԸ | **Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ գույնի ԳՕՍՏ 19867-93:** Արտիկուլ- 82039 կամ համանման կտորից 1մ2 քաշը 180գր., բաղադրությունը՝ 33% վիսկոզա, 67% պոլիէսթեր: Տղամարդու վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտաձող: Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից կտորի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով | հատ | 4500 | 225000 | 50 | Ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 50 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բայց ոչ ուշ քան 31.03.2021թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ՝ մնացածը 11մմ երկու անցքով: Արտադրվում են 38/2-46/6 չափս-հասակների: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն : | | | | | | | |
| 6 | 35811170/506 | Համազգեստ | Մանանկ ՍՊԸ | **Դաշտային կոստյում ՝ կեպիով, բամբակյա գունաքողարկված գործվածքից** Պետք է արտադրվի 35 բամբակ, 65 պոլիէսթեր բաղադրությամբ լեռնաանտառային թվային գունավորմամբ | լրակազմ | 15300 | 6120000 | 400 | Ք. Երևան Պողոսյան 1-ին փակուղի 20 | 400 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | լեզվակ, որի երկարությունը 9սմ է: Լեզվակի վրա երկու կողմից կարված է կպչուն ժապավենի փափուկ մասը հետևյալ չափերով⊠ երեսի կողմից՝ 5 × 5սմ, ներսի կողմից՝ 5 × 8սմ: Ձախ լանջափեշի ծայրից 4 սմ հեռավորության վրա կարվում է 5 × 5սմ չափերով կպչուն ժապավենի կոշտ մասը: Աջ լանջափեշի ծայրից 5սմ հեռավորության վրա կարվում է 5 × 8սմ չափերով կպչուն ժապավենի կոշտ մասը: Բաճկոնի առաջամասում մշակվում է կափույրներով 4 վրադիր գրպաններ ՝ երկուսը կրծքամասում, երկուսը բաճկոնի կողային հատվածում: Կրծքամասի գրպանների երկարությունը 16սմ է, իսկ լայնությունը՝ 14,5 սմ: Կրծքամասի վրադիր գրպանների կափույրների երկարությունը 14,5 սմ է, իսկ լայնությունը՝ 6սմ: Կափույրների անկյունները կտրած են: Կափույրները կոճկվում են երկուական 18 մմ տրամագծով ջերմակայուն պլաստմասե կոճակներով, գաղտնի | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կոճկվածքով: Կրծքամասի գրպանները կարվում են 55 աստիճան դեպի ներս թեքությամբ՝ կենտրոնական ուղղահայաց կարից 1,5 սմ հեռավորության վրա: Բաճկոնի կողային հատվածի գրպանների երկարությունը 17,5 սմ է, իսկ լայնությունը՝ 16,5 սմ: Բաճկոնի կողային գրպանների կափույրների երկարությունը 14,5 սմ է, իսկ լայնությունը՝ 6սմ: Կափույրների անկյունները կտրած են: Կափույրները կոճկվում են երկուական 18 մմ տրամագծով ջերմակայուն պլաստմասե կոճակներով, գաղտնի կոճկվածքով: Կողային գրպանները կարվում են բաճկոնի ներքևից 3 սմ բարձրության վրա: Հեռավորությունը բաճկոնի աջ և ձախ փեշերի ուղղահայաց եզրերից ՝ համաձայն տեխնիկական պայմանի: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ: Թևքերի | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կափույրի երկայնքով կոճկվում են 5 սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Գրպանների երկարությունը 16 սմ է, իսկ լայնությունը՝ 13 սմ: Ձախ թևքի գրպանի վրա՝ գրպանի ներքևից 1,5 սմ բարձրության վրա, կարված է կպչուն ժապավենի փափուկ հատվածը, որի երկարությունը 11 սմ է, իսկ լայնությունը՝ 10 սմ: Թևքերի ներքևի մասում մշակված են 7 սմ երկարության լեզվակներ կտրված անկյուններով, որոնք բազկակալում կոճկվում են կպչուն ժապավենով: Բաճկոնի ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ կոճակ օղակով: Բաճկոնը ունի աստառ բամբակյա /բիազ/ գործվածքից, թիկունքի և կրծքավանդակի հատվածում: Աստառի ձախ կրծքամասում մշակված է կտրվածքով ծոցագրպան, որը կոճկվում է մեկ կոճակ օղակով: | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Տաբատը բաղկացած է առաջամասից, ետնամասից և գոտուց: Տաբատը ուղիղ կարվածքով, մշակված գոտիով, գուլֆիկը գաղտնի կոճկվածքով, 3 օղակ կոճակով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ, 17սմ բացվածքով: Գոտին մշակված է 7 գոտեմակօղակով և գոտու չափը կարգավորող ձգված էլաստիկ ժապավենով: Տաբատի առաջամասում մշակված են, գրպանի ներքևի եզրից, (եզրը՝ ներսից դուրս, 6 սմ շեղությամբ) քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Տաբատի նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի կտորից՝ զարդակարված 0□7 սմ լայնությամբ կրկնակի կարով: Աջ ետնամասում մշատված է գրպան կափույրով, որը կոճկվում է 1 օղակով և 2 կոճակով: Տաբատի փողքերի ներսամասում կարվում է կարգավորվող երկու կոճակ օղակներով փողքաժապավեն: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 18 մմ տրամագծով պատրաստված ջերմադիմացկուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ հղկված, երկկողմանի կարվող, գույնը՝ խակ կանաչ: Կեպին աստառով է, կազմված կոշտ հովհարից, միջնամասից, կոշտ կողամասերից և հատակից: Կողամասերը /միջնամասը և հատակը/ մշակվում են սոսնձային կտորից միջադիրով և դեղնականաչավուն գույնի աստառով, բամբակյա /միազ/ կտորից: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական գույնի պլաստմասե կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Ճակատային մասում տեղադրված է 4 սմ լայնությամբ երկտակ կտորից հյուսված գոտի, միջադիրով: | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ (լվացքի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման): Բաճկոնի ներսի կողմի ձախակողմյան փեշին, ներքևից 3 սմ բարձրության վրա պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս - հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները: Արտաքին տեսքը համաձայն էսքիզի: Բոլոր պարամետրերի | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | թույլատրելի շեղումը՝ 2 : Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: | | | | | | | |
| 9 | 18211100/503 | Կիսավերարկու | Մանանկ ՍՊԸ | **Կիսավերարկու:** Գարնանային-աշնանային կիսավերարկու դեղնականաչավուն 4C5-KB-гл արտիկուլի կամ համանման անջրանցիկ դեղնականաչավուն գույնի կտորից, 1մ2 մակերեսային խտությունը՝ 214գր., բաղադրությունը՝ 53% բամբակ, 43% | հատ | 10800 | 540000 | 50 | Ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 50 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բայց ոչ ուշ քան |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պոլիէսթեր, տաք /սինտեպոնե/ ներդիրով: Թիկունքամասը մշակվում է կոկետկայով: Կիսավերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից: Լանջափեշերը կոճկվում են 4 հատ 18մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Մեջքը՝ մեջտեղի կարով, թևքերը երկկարանի ներկարված: Ձախ լանջափեշին ներսից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոչկվում է 1 պլաստմասե կոճակով և օղակով, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 2 գոտեմակող: Ոինի գոտի պլաստմասե ճարմանդով և 2 գոտեմակող: Ուսադիրների շրջանում 2 փակ օղակներ և 2 կամրջակներ | | | | | | | 31.03.2021թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ուսադիրների ամրացման համար: Աստառը՝ մետաքսյա կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից: Ներդիրը՝ /թիկունքը և թևքերը/ սինտեպոն: Աստառը, մգդակված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Ապրանքը պետք լինի պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝եռաշեր տ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կիսավերարկուի չափսերին, որպեսզի կիսավերարկուն չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: | | | | | | | |
| 12 | 35811240/506 | Թևքանշան և այլ պարագաներ | Մանանկ ՍՊԸ | **Թևքանշան դաշտային:** Հայաստանի Հանրապետության դրոշի, Հայաստանի Հանրապետության զինանշանի և Պետական պահպանության ծառայության խորհրդանիշի պատկերով ՝ 11սմ×10սմ, շագանակագույն ֆոնի վրա: Թևքանշանի եզրակարերը, Հայաստանի Հանրապետության զինանշանը և Պետական պահպանության | հատ | 222 | 222000 | 1000 | Ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 1000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բայց ոչ ուշ քան 31.03.2021թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծառայության խորհրդանիշը խակի գույնի: Հայաստանի Հանրապետության դրոշի գույները՝ եռագույնի գույներով: Թևքանշանի հետևի մասում պետք է ամրացված լինի կպչուն ժապավենի կոշտ մասը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: | | | | | | | |
| 13 | 35811240/505 | Թևքանշան և այլ պարագաներ | Մանանկ ՍՊԸ | **Ուսադիր** Պատրաստված պետք է լինի 8x6սմ ՊՊԾ դաշտային համազգեստի կտորից, որի վրա ասեղնագործված պետք է լինի զինվորական կոչումների համապատասխան աստղեր, որը նախօրոք պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Ասեղնագործված աստղերը պետք է լինեն մուգ շագանակագույն: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը | հատ | 180 | 180000 | 1000 | Ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 1000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բայց ոչ ուշ քան 31.03.2021թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

Պետական պահպանության ծառայություն

ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի

գործառնական վարչություն

Հ/հ 900011004497

ՀՎՀՀ 00006796

Պետ՝ Ս. Հովհաննիսյան

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ

ՀՀ, Երևան, Առինջ 2 մկշր /2/10/39

Կոնվերսբանկ ՓԲԸ

Հ/Հ 19300920182600

ՀՎՀՀ 01016995

Տնօրեն Մելիք-Սարգսյան

*Հավելված N 2*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 35811170/505 | Համազգեստ | - | - | - | - | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 |
| 4 | 18331200/508 | Վերնաշապիկներ | - | - | - | 336000 | 336000 | 336000 | 336000 | 336000 | 336000 | 336000 | 336000 | 336000 | 336000 |
| 5 | 18331200/507 | Վերնաշապիկներ | - | - | - | 225000 | 225000 | 225000 | 225000 | 225000 | 225000 | 225000 | 225000 | 225000 | 225000 |
| 6 | 35811170/506 | Համազգեստ | - | - | - | - | 6120000 | 6120000 | 6120000 | 6120000 | 6120000 | 6120000 | 6120000 | 6120000 | 6120000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 18211100/503 | Կիսավերարկու | - | - | - | 540000 | 540000 | 540000 | 540000 | 540000 | 540000 | 540000 | 540000 | 540000 | 540000 |
| 12 | 35811240/506 | Թևքանշան և այլ պարագաներ | - | - | - | 222000 | 222000 | 222000 | 222000 | 222000 | 222000 | 222000 | 222000 | 222000 | 222000 |
| 13 | 35811240/505 | Թևքանշան և այլ պարագաներ | - | - | - | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | 17623000(տասնյոթ միլիոն վեց հարյուր քսաներեք հազար) |

**ԳՆՈՐԴ**

Պետական պահպանության ծառայություն

ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի

գործառնական վարչություն

Հ/հ 900011004497

ՀՎՀՀ 00006796

Պետ՝ Ա. Հովհաննիսյան

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ

ՀՀ, Երևան, Առինջ 2 մկշր /2/10/39

Կոնվերսբանկ ՓԲԸ

Հ/Հ 19300920182600

ՀՎՀՀ 01016995

Տնօրեն Մելիք-Սարգսյան